ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N **«ՀՀՄՆ-ՊԸԱՊՁԲ-17/46-1»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի օգոստոսի** 9-ին կնքված **«ՀՀՄՆ-ՊԸԱՊՁԲ-17/46-1»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի** 14-ին կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրի N 15 չափաբաժնով նախատեսված սանթուրների հանձնման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 2 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված մատակարարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի հունվարի 8-ը: Պայմանագրում կանխավճարի հատկացման նախատեսում՝ 15-րդ չափաբաժնի համար նախատեսված գումարի չափով:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի և 2017թ. օգոստոսի 9-ին կնքված պետության կարիքների համար երաժշտական գործիքների մատակարարման պետական գնման N «ՀՀՄՆ-ՊԸԱՊՁԲ-17/46-1» պայմանագրի 9.4 և 9.5 կետերի համաձայն ապրանքների մատուցման ժամկետի երկարաձգում և կանխավճարի տրամադրում՝ Վաճառողի կողմից ներկայացված բանկային երաշխիքի ներկայացմամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Նանե Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՊԸԱՊՁԲ-17/46-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» 12 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ «Գնորդ»), մի կողմից, և «Աշոտ Ազիզյան Ազատի» Ա/Ձ-ն ի դեմս տնօրեն Ա. Ազիզյանի (այսուհետև՝ «Վաճառող») մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի օգոստոսի 9-ին կնքված պետության կարիքների համար երաժշտական գործիքների մատակարարման պետական գնման **N «ՀՀՄՆ-ՊԸԱՊՁԲ-17/46-1»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.4-րդ և 9.5-րդ կետեր և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով՝ Գնորդը և Վաճառողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի 4.1 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1.1 ենթակետով.

4.1.1«Պայմանագրի գնից՝ **15-րդ չափաբաժնի մասով (սանթուր)՝ 960 000 (ինը հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:

1.1.2. Պայմանագրի N 2 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման գնման ժամանակացույց» հավելվածում 15-րդ չափաբաժնով

«սանթուրի» մատակարարման ժամկետ սահմանել **«08» հունվար, 2018 թ.»**:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011012896 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	Ա/Ձ «Աշոտ Ազիզյան Ազատի» , Հասցեն՝ ք. Երևան, 16 թաղ. 25շ. 111 բն. հեռ.՝ (374) 77 061955, էլ. փոստ՝ aaazizyan@mail.ru ՀՎՀՀ 27837851, հ/հ 163028038590 Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Շահումյան մ/6
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Ա. Ազիզյան (ստորագրություն) Կ.Տ.